


# Ուրախ գիշեր



Exported from Wikisource on 08/05/20

# Ուրախ

## գիշեր

← [Նեսոյի  
քարարաղնիսը](#)

[Ալահից  
ոռկված](#)

[Հովհաննես](#)

[Թումանյան](#)

[98]

1911

ՈՒՐԱԽ ԳԻՇԵՐ

Ինչքա՞ն ծիծառեցին են գիշեր . . .

Ամենքը զաղթականներ էին: Նոր էին Թիֆլիս հասել: Զանոն էլ նրանց հետ էր: Իր հոր փեշիցը բռնած նա անց էր կացել ճյունոտ սարերով, ամայի, ցուրտ դաշտերով, երկա՞ր-երկա՞ր ճամապարհ:

Նա չէր հասկանում, թե ինչու պատահեց են ամենը, ինչ որ ինքը տեսավ. Են իրացանների ճայրյունը, են աղաղակը, են ծուխն ու կրակը, են փախուստը, որ փախչում էին ամենքը, ամենքը . . . Եվ չէր հասկանում, թե ինչպես եղավ, որ իր մայրիկը կորավ են ժամանակ:

Հայրիկը փախցրեց իրեն ու իր փոքրիկ եղբորը՝ Սուրիկին: Ամբողջ ճանապարհին հայրիկը պինդ գրկած էր Սուրիկին, իսկ Զանոն բռնած էր փեշից: Ճանապարհին հաճախ լաց էր լինում Սուրիկը: Հայրիկն աշխատում էր նրան տաքացնել ու հանգստացնել.

— Սո՞ւս, Սուրբիկ ջան, սո՞ւս: — Ամեն անգամ Զանոն էլ հոր ետևից կրկնում էր. «Սո՞ւս, Սուրբիկ ջան, սո՞ւս», ու միշտ էլ ավելացնում էր. «Մայրիկը հիմի կզա»: Նա զարմանում էր, թե ինչո՞ւ հայրիկն էլ չի ասում՝ մայրիկը կզա: Հայրիկը հենց ասում էր՝ կհասնենք Թիֆլիս. . . կհասնենք Թիֆլիս. . .

Վերջապես հասան Թիֆլիս:

Մի մութը, մոայլ ու ցեխ աշնան իրիկուն էր, որ հասան Թիֆլիս: Զանոն մտածում էր, թե Թիֆլիսում կարոտած մարդիկ են սպասում իրենց, որ դեմ կզան կգրկեն, կհամբուրեն. գուցե և մայրիկը նրանց մեջ լինի: Ոչ ոք չերևաց: Ամենքը անց էին կենում նրանց կողքով: Մինչև <sup>29</sup> անգամ նրանք, որ մոտենում մի, բան էին տալի կամ հետաքրքրվում, այնպես էին վերաբերվում՝ ինչպես աղքատների: Եվ այստեղ իմացավ նա առաջին անգամ, որ հայրիկն էլ հայրիկ չի, ոչ Սուրբիկը՝ Սուրբիկ, ոչ էլ ինքը՝ Զանոն, այլ «զաղթականներ» են: Հայրիկը և մյուս զաղթականները զնացին ման, եկան, շատ խնդրեցին սրան, նրան, ցույց տվին երեխաների վրա, որ հոգնած էին, մրսում էին, երկար խնդրեցին, երկար սպասեցին, մինչև որ քերին էս տունը:

Միակ լամպը աղոտ լուսավորում էր հին մեծ սրահը, մի ծայրից մյուսը: Պատերի երկարությամբ տեղավորվել էին զաղթականները, ընտանիք-ընտանիք: Զանոյի հայրն էլ իր երկու երեխաների, հետ մի անկյունում էր տեղավորվել: Հայրիկը թինկը տված՝ ծոցն էր առել Սուրբիկին, իսկ Զանոն մի զույգ կոշիկ գրկին նստած էր նրանց

կողքին: Ու Էնպես լավ էր զգում Զանոն իրե՛ն . . . Էլ չկար Էն երկյուղը, որ տեսան, Էլ չկային երկար, ցուրտ ճամփեքն ու սովո՞ւ: Տաք սենյակում հաց էր կերել ու հոգնությունից հետո մի ախորժելի հանգիստ էր զգում: Քունք տանում էր թեև, բայց նա մտածում էր Էն փոքրիկ աղջկա վրա, որ ժպտալով իրեն նվիրեց գոգին դրած կոշիկները: Ի՞նչ լավն էր Էն աղջիկը, ի՞նչ լավն էին նրա ժպտուն, զվարթ աշքերը, ի՞նչ լավն էր Էն տաք ապահով սենյակը, ի՞նչ լավն էր Էն գիշերը . . .

Քաղաքում մի խումբ տիկիններ հնամաշ շորեր Էին հավաքել ու բաժանում Էին զաղթականներին: Գաղթականներից ոմանք ստացած շորերն Էին շինում, հարմարեցնում իրենց, ոմանք հաց Էին ուտում, ոմանք ծխում ու զրոյց անում:

Էն գիշեր ամենքն Էլ լավ Էին զգում իրենց, ամենքն Էլ ուրախ Էին: Իրենցից որը ներս էր զալի՝ քաղաքացու մի որևէ շոր հագին կամ կրկնակոշիկները ուտներին, Էս ու Էն կողմից սրախոսում Էին, ծիծաղում, ուրախանում: Մանավանդ երբ ներս եկավ Էն խեղկատակ Մարտոն: Ամեն ծիծաղելի բան Էլ հակառակի նման հենց նրա հետ էր պատահում: Զգիտես ում խելքին էր փշել, մի հին ցիլինդր Էին տվել նրան ու մի թևը կոտրած հովանոց: Եվ ահա զաղթականների ուրախ ժամանակ դոնից ներս մտավ Մարտոյի հովանոցը, նրա ետևից՝ ցիլինդրավոր Մարտոն: <sup>100</sup> Գաղթականները առաջին րոպեին շփոթվեցին, բայց տղաներից մինք շուտով ճանաչեց, վեր կացավ ցիլինդրին զարկեց, ցիլինդրը գետին թռավ, մի

ուրիշն էլ հովանոցը փախցրեց, ու  
մեջտեղը կանգնեց էն մասխարա  
Մարտոն:

— Sn, Մարտոն, քու տունը չքանդվի,  
տոն, մասխարա . . .

Ամբողջ սրահը սկսեց հոհոալ:

— Sn զարկե՛ք էղ խեղկատակին:

Ու սկսեցին կատակով զարկել  
Մարտոյին, էս կողմը քարշ տալ, էն  
կողմը ձգել: Ի՞նչ ծիծառ ընկավ սրահը,  
ի՞նչ ծիծառ:

Ծիծառում էին ամենքը, ծիծառում  
էր Զանոն: Նա ուզեց Սուրբիկին վեր  
կացնի, որ նա էլ ծիծառի, բայց Սուրբիկը  
քնած էր: Զվարթ աղմուկի մեջ կամաց-  
կամաց իր քունն էլ տարավ ու նվերը  
կրծքին սեղմած քնեց Զանոն:

Քնեց, և ահա եկավ, երևաց մայրիկը:  
Տխուր էր մայրիկը, բայց Զանոյին  
ժպտում էր:

— Մայրի՛կ, մայրի՛կ, տե՛ս, էն  
աղջիկը տվեց ինձ . . . Էնպես լավ  
աղջիկ է՛ր, էնպես լավ աչքեր ունե՛ր,  
էնպես լավ մայրիկ ունե՛ր . . .  
մայրի՛կ . . . մայրի՛կ . . .

Ու երկար, երկար մայրիկի հետ էր  
Զանոն, երբ վեր թռավ մի զի ձենից:  
Գաղթականներից մինն էր, որ  
ընդհանուր աղմուկի մեջ երգ էր երգում:

«Արև շողեր ա  
պայծառ,

Նախշուն ա դաշտ,  
ճյուղն ու ծառ,

Հրդկի պերս  
հավաքվեր՝

Կուճլվուան մեր  
հավքեր,

Վայ լե՛, վայ լե՛ . . . »:

Այնինչ մյուս անկյունում Մարտոն  
դեռ անում էր իր ծաղրածությունները  
ընդհանուր ծիծաղի մեջ: Քնաթաթախ  
Չանոն չէր հասկանում, թե որտեղ էր  
գտնվում, բայց որտեղ էլ լիներ, նրան  
թվում էր, թե սրահը լիքն էր  
մոտիկներով, հարազատներով,  
տաքությունով ու լուսով, զվարք քրքիջով,  
հայրիկի շնչով, մայրիկի ժայռով, են  
աղջկա պայծառ հայացքով, հայրենի  
երգի մրմունջով . . .

Ամենքն էլ ենտեղ էին, ամենքն էլ  
ուրախ . . . Եվ ի՞նչքան ծիծաղեցին են  
գիշեր ամենքն էլ, ի՞նչքան ծիծաղեց  
Չանոն . . .

Ի՞նչ ուրախ գիշեր էր, ի՞նչ ուրախ  
գիշեր . . .

# About this digital edition

This e-book comes from the online library [Wikisource](#)<sup>[1]</sup>. This multilingual digital library, built by volunteers, is committed to developing a free accessible collection of publications of every kind: novels, poems, magazines, letters...

We distribute our books for free, starting from works not copyrighted or published under a free license. You are free to use our e-books for any purpose (including commercial exploitation), under the terms of the [Creative Commons Attribution-ShareAlike 3.0 Unported](#)<sup>[2]</sup> license or, at your choice, those of the [GNU FDL](#)<sup>[3]</sup>.

Wikisource is constantly looking for new members. During the realization of this book, it's possible that we made some errors. You can report them at [this page](#)<sup>[4]</sup>.

The following users contributed to this book:

- Վազգեն
- GeoO

- 
1. [↑ http://wikisource.org](http://wikisource.org)
  2. [↑ http://www.creativecommons.org/licenses/by-sa/3.0](http://www.creativecommons.org/licenses/by-sa/3.0)
  3. [↑ http://www.gnu.org/copyleft/fdl.html](http://www.gnu.org/copyleft/fdl.html)
  4. [↑ http://wikisource.org/wiki/Wikisource:Scriptorium](http://wikisource.org/wiki/Wikisource:Scriptorium)